Տ. ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ծնվել է 1964 թ. սեպտեմբերի 13-ին, Աբովյանի շրջանի Գողթ գյուղում:

1970-1981 թթ. սովորել և ավարտել է գեղի միջնակարգ դպրոցը:

1982-1989 թթ. սովորել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1983-1985 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1989 թ. մայիսի 7-ին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1989 թ. օգոստոսի 7-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ակների դպրոցը» թեմայով:

1989 թ. հոկտեմբերի 1-ից, Երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, ուսումը շարունակելու նպատակով, ընդունվել է Զագորսկի Հոգևոր Ակադեմիա, որն ավարտել է 1991 թ., ստացել աստվածաբանական գիտությունների թեկնածուի աստիճան՝ պաշտպանելով «Հայ Եկեղեցու թեմերը Ռուսաստանում» թեզը:

1991 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և նշանակվել Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ:

Հոգևոր հովվության տարիներին, եկեղեցական ծառայությանը զուգահեռ, կրոնական դասեր է ավանդել տեղի հայկական գիմնազիայում, ինչպես նաև հետևել Մոսկվայի հայկական համայնքում իրականացվող քրիստոնեական կրթության և դաստիարակության աշխատանքներին:

1996 թ. պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հայ Եկեղեցու քրիստոսաբանական միտքը 8-րդ դարում Ս. Հովհան Օձնեցու և Խոսրովիկ Թարգմանչի երկերում» թեմայով:

1996 թ. հունիսի 23-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի, ստացել է վարդապետական աստիճան:

1997 թ. ապրիլից մինչև 1999 թ. դեկտեմբեր, Գարեգին Ա Երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ, եղել է Ս. Հռիփսիմե վանքի վանահայր:

1999 թ. դեկտեմբերին, Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի տնօրինությամբ, նշանակվել է Նոր Նախիջևանի և Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդական փոխանորդ, 2001 թ. ապրիլից Վեհափառ Հայրապետի նոր տնօրինությամբ՝ առաջնորդ:

2001 թ. սեպտեմբերի 30-ին, ձեռամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ձեռնադրվել է եպիսկոպոս: